

## Ագարակ քաղաք

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 94 կմ,  
Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 410 կմ,  
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 660 մ,

## Համառոտ նկարագիր

Ագարակ քաղաքը հիմնադրվել է Արաքս գետի ձախ ափին 1949թ.-ին՝ որպես համանուն պղնձամոլիբդենային կոմբինատին կից բանավան: Կառուցապատումը շարունակվել է մինչև 1992թ.: Սկզբում կառուցվել են 1-2 հարկանի բնակելի առանձնատներ, հետագայում՝ 3-4, իսկ 1979թ.-ից 5 հարկանի բնակելի շենքեր: 1996թ.-ին բանավանը վերանվանվել է Ագարակ քաղաք: Ագարակ քաղաքն ունի կենսական, մշակութային և սպորտային, կրթական ու ընդհանուր զարգացվածությունը ապահովող բոլոր կառույցները՝ հիվանդանոց, կոմունալ բարեկարգման տնտեսություն, մուր-մանկապարտեզ, միջնակարգ դպրոց, արվեստի և գրադարանային ծառայության կենտրոն, մշակույթի պալատ:

«Ագարակի թիվ 1 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը երկու մասնաշենքից բաղկացած հիանալի մանկապարտեզ է, որի ժամանակակից պայմաններին համապատասխանող, վերանորոգված գեղեցիկ մթնոլորտում կրթվում և դաստիարակվում են 200 երեխա:

«Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը երկու մասնաշենքից բաղկացած, վերանորոգված դպրոց է, որում ուսանում, միջնակարգ կրթություն են ստանում մոտ 200 աշակերտ:

«Ագարակի արտադպրոցական դաստիարակության և գրադարանային ծառայության կենտրոն» ԲՀ-ն, որում դաստիարակվում, պարի, նկարչության, երգի և երաժշտության, մշակութային դասեր են քաղում 147 երեխաներ, վերջին ժամանակներս նոր ուժով և եռանդով է իրականացնում իր աշխատանքային գործունեությունը:

Ագարակ քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում, սահմանակից է Իրանի Իսլամական Հանրապետությանը, ունի ռազմավարական նշանակություն և գտնվում է Հայաստանը Իրանի հետ կապող ավտոմայրուղուց 1 կմ հեռավորության վրա:

Ագարակն ապահովված է միջին մեծության մասնավոր հյուրանոցներով, որոնց դռները միշտ բաց են ցանկացած հյուրի առջև:

Ագարակ քաղաքն ունի խիստ կանոնավոր փողոցային ցանց: Փողոցները 2 տիպի են՝ համայնքային և ներթափանցային, համապատասխանաբար 10 մ և 6 մ լայնությամբ:

Քաղաքի ինժեներատրանսպորտային հաղորդակցության ապահովվածության միակ գործող ուղին ավտոմայրուղին է:

Ագարակը բնական ռեսուրսների մեծ պաշարներ ունի, որից ամենատարածվածը պղնձամոլիբդենային հումքն է:

Արտադրության գերիշխող ճյուղերն են լեռնահանքային արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

Քաղաքի տնտեսական և աշխատանքային շուկան քաղաքի ստեղծման իսկ օրվանից պայմանավորված է եղել և այսօր էլ կա «Ագարակի ՊՄ կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությամբ:

Ագարակ համայնքի հողային ֆոնդին անդրադառնալով՝ պետք է նշել, որ հողերի մեծ մասն իրենցից ներկայացնում են բնակելի, հասարակական, կոմունալ-պահեստային նշանակության կառուցապատված տարածքներ:

Ագարակը՝ որպես Հայաստանի Հանրապետության հարավային դարպաս և փոքրիկ սահմանամերձ քաղաք, մոտ ապագայում մեծ հեռանկարներ ունի տարածքային, ազգաբնակչության թվի, մշակութային, տնտեսական, տրանսպորտային և այլ ոլորտների զարգացման գործում:

## Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 326 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 34 հա, որից՝
- վարելահող՝ 22 հա, այլ հողատեսք՝ 12 հա
- բնակավայրերի հողեր՝ 236 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 33 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 4հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 7 հա,
- ջրային հողեր՝ 7 հա